

Սուրբ Էջմիածնի. այս հնարովքս զնա խոնարհեցուցին:

Եւ Դչի (24 Մայիս). ելեալ գնացաք ի չիթլիկ Անտոնին, եւ անդ կացաք մեծաւ ուրախութեամբ մեծամեծօք քաղաքին եւ Անտոնիւն եւ միաբանօքս Հուգեւորտիւրին:

Եւ առաւօտուս Դչի որ էր օր ամսոյն Ին, անդ եւս ի չալիւրն օրհնեաց զմեզ եւ ել ի ջորին իւր եւ գնաց եւ մեք եկաք ի քաղաքն:

Եւ Եչի (26 Մայիս) առաւօտուն գնացաք ընդ վարդապետին ի Ղարլուճան եւ անտի ի պաղչա մի՝ նըստեալ մինչ յիրիկուն պատիւ արարեալ քաղաքացիք մեզ. և այգուցն (27 Մայիս) գնացեալ շրջեցաք ի թագաւորաց տեղիսն քաղաքին:

Կիրակի (29 Մայիս) Սուրբ Հոգւոյ գալուստ, որ ասի Պենտակոստ. Տէր Պետրոսենք տարան զիս ի Չամլուճան:

Առաւօտուս Բչի (30 Մայիս) ելաք ի Պուրսայու քաղաքէն գալ ի տեղիս մեր:

Յունիս ամիս օր Դչի:

Եչի օրս (2 Յունիս) եկաք աստ ի քաղաքս մեր:

Եւ Բչի (6 Յունիս) ուխտաւորքն երուսաղէմայ եկին:

Եւ Ուրբաթ (10 Յունիս) Գաբրիէլն մեր եկաւ ի Մանիսոյ:

Եչի օր ԺԶ-ին ամսոյ զՍարի յերլանն Ուսկիւտարոյ ի զնտանն եղին՝ թէ անարդեաց զօրէնս առաջնորդին. և նա զմեծամեծս քաղաքին ձայնեաց թէ երթանք սպանել տանք զայս. և գնացեալ ի վէզիրն եւ ի ղազիէսքէրքն եւ նոքա ոչ տվին երես սոցա, եւ արք ոմանք մտեալ ի մէջ՝ թոյլ ետուն եւ յետ աւուրց ինչ բանադրանք ետ բերել Էջմիածնայ եւ նա ել գնաց անդ զիջանիլ: